ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ

ՀՐԱՄԱՆ № 74-Լ

«29» 09 2025թ. ք. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 27-Ի N 47 ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության դատախազության բնականոն գործունեությունն ապահովելու անհրաժեշտությունից ելնելով, Արմավիրի մարզի դատախազության ավագ դատախազի 1 թափուր հաստիքը Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի դատախազության դատախազի 1 հաստիքով փոխարինելու նպատակով, ղեկավարվելով «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ և 7-րդ կետերով, 30-րդ հոդվածի 3-րդ մասով՝

Հրամայում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 2022 թվականի հունիսի 27-ի՝ «Հայաստանի Հանրապետության դատախազության հաստիքացուցակը սահմանելու և Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 2021 թվականի նոյեմբերի 22-ի N 91 հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 47 հրամանում (այսուհետ՝ Հրաման) կատարել հետևյալ փոփոխությունները.

1) 1-ին հավելվածի 3-րդ բաժնի 22-րդ գլխի 84-րդ կետի «Դատախազության դատախազ 4» բառերը փոխարինել «Դատախազության դատախազ 5» բառերով, «Ընդամենը 9» բառերը՝ «Ընդամենը 10» բառերով, իսկ 23-րդ գլխի «ԸՆԴԱՄԵՆԸ՝ Երևան քաղաքի և Երևան քաղաքի վարչական շրջանների դատախազություններում 107» բառերը՝ «ԸՆԴԱՄԵՆԸ՝ Երևան քաղաքի և Երևան քաղաքի վարչական շրջանների դատախազություններում 108» բառերով,

2) 1-ին հավելվածի 4-րդ բաժնի 26-րդ գլխի 99-րդ կետի «Դատախազության ավագ դատախազ 5» բառերը փոխարինել «Դատախազության ավագ դատախազ 4» բառերով, «Ընդամենը 17» բառերը՝ «Ընդամենը 16» բառերով, իսկ 33-րդ գլխի «ԸՆԴԱՄԵՆԸ՝ Մարզերի դատախազություններում 115» բառերը՝ «ԸՆԴԱՄԵՆԸ՝ Մարզերի դատախազություններում 114» բառերով,

3) 1-ին հավելվածի 6-րդ բաժնի «ԸՆԴԱՄԵՆԸ՝ Երևան քաղաքի և Երևան քաղաքի վարչական շրջանների դատախազություններում դատախազների թիվը 107» բառերը փոխարինել «ԸՆԴԱՄԵՆԸ՝ Երևան քաղաքի և Երևան քաղաքի վարչական շրջանների դատախազություններում դատախազների թիվը 108» բառերով, իսկ «ԸՆԴԱՄԵՆԸ՝ Մարզերի դատախազություններում դատախազների թիվը 115» բառերը՝ «ԸՆԴԱՄԵՆԸ՝ Մարզերի դատախազություններում դատախազների թիվը 114» բառերով:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

3. Սույն հրամանի կատարման վերահսկողությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազը:

4. Սույն հրամանի պատճենն ուղարկել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալներին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության վարչությունների պետերին, Երևան քաղաքի, Երևան քաղաքի վարչական շրջանների և մարզերի դատախազներին, կայազորների զինվորական դատախազներին, Հայաստանի Հանրապետության զինվորական կենտրոնական դատախազության բաժինների պետերին, ավագ դատախազներին, Հայաստանի Հանրապետության դատախազության գլխավոր քարտուղարին և տեղակալներին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի խորհրդականներին ու օգնականներին:

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ԴԱՍԻ ՊԵՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԿԱՆ **Ա. ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ**